

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՇԱՆԷ ԱԲԵՂԱՅ ԱՆԱՆԵԱՆ

«ԱՌ-ԱԿ»-Ն ԸՍՏ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ՆԱՅԵՐԷՆ Թ-ԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

«Առակ»-ի¹ վերաբերեալ աշխարասիրած իր դասական մեկնագրութեան մէջ² գերմանացի նշանաւոր արեւելագէտ Օ. Էյսֆելտ-ը, հանգամանալից վերլուծութիւններից յետոյ, Նին Կրակարանում «առակ»-ի ճիշտ մեկնաբանութեան համար վերջնական խօսքը պալիս է բառի համարեքսպային և ժանրային նշանակութիւնների բացայայտմանն ուղղուած բնագրագիտական և մեկնաբանական աշխարանքներին: Ըստ գերմանացի գիտնականի՝ առակի ժանրային և իմաստային առանձնապարկութիւնների վերհանումը հիմնուած պէտք է լինի համարեքսպային վերլուծումների վրայ՝ հաշտի առնելով յարկապէս աստուածաշնչային փուլեալ հարուածում առակի բնագրային և իմաստային դերը³: Գերմանացի մասնագէտի այս հմարալից աշխարութեան մէջ արարայայտուած գաղափարներից շարերն ընդունուած են ներկայիս հինկրակարանեան գիտական աշխարութիւնների մէջ՝ որպէս դասական ենթահէնք առակի և նրան յարակից սուրբգրային գրական սեռերի ուսումնասիրութեան համար⁴:

Առակի կիրառութիւնը, իբրև սուրբգրային գրական սեռերից մէկը, մեծապէս կարևորուել է հինկրակարանեան հեղինակների կողմից. դրա արձագանքները լսելի են Իսրայելի արքայից շար առաջ ապրած մարգարեների երկերից (Ք. ա. թ-Ը դդ.) մինչև Յիսուս Քրիստոսի քարոզութեան ժամանակաշրջան՝ Նոր Կրակարան⁵: Ուստի կարևոր ենք համարում յօդուածիս սահմաններում անդրադառնալ առակի իմաստային և լեզուաբանական զարգացման շրջաններին՝ դիտարկելով այն հիմնականում իբրև Սուրբ Գրքի թարգմանութեան մէջ օգրագործուած գրական-աստուածաբանական գործօն: Նայելէն թարգմանութեան պարագային հերաքքիք է յարկապէս առակի գործառոյթը՝ իբրև ընդհանրացնող մի հասկացութիւն յունարէնից և ասորերէնից գրաբար բնագրին անցած ու առակին

1 Նինկրակարանեան ուսումնասիրութիւնների մէջ «առակ»-ը համապարասխանում է եբրայեցերէն բնագրում գերակշռող *mašal*-ին, որն էլ ընդունուած անուանումն է դարձել հինկրակարանեան այդ գրական սեռը բնորոշելու համար: Մտորել «առակ»-ը փոխարինելու է *mašal*-ին իբրև բառի բնագրային և իմաստային բոլոր առանձնապարկութիւնների կրող:

2 Օ. **Eißfeldt**, *Der Maschal im Alten Testament*, (Beihefte zur Zeitschrift für die alttestamentliche Wissenschaft XXIV), Gießen, 1913:

3 Անդ, §§ 2-3:

4 Տե՛ս **Eliau Cu villier**, *Le concept de PARABOLH dans le second Évangile*, Paris, Gabalda (coll. Études Bibliques, Nouvelle série n° 19), 1993, էջ 21-47, **J. P. Pirot**, «Le Mašal dans l' Ancien Testament», *Revue des Sciences Religieuses* 37 (1950) էջ 566-580:

5 Տե՛ս **G. Johannes Botterweck, Helmer Ringreen, Heinz-Josef Fabry**, *Theological Dictionary of The Old Testament*, vol. IX, էջ 64, **George Landes**, «JONAH: A MAŠAL?» in *Israelite Wisdom: Theological and Literary Essays in Honor of Samuel Terrien*, ed. John G. Gammie, Walter Bruegemann et alii, Missoula 1978, էջ 139:

հոմանիշ ծառայած արքայապարտիներին: Ընդ որում, առակի թարգմանությունը հայերեն բնագրում կարևոր է՝ թարգմանական եղանակների ճիշտ գնահատման առումով:

Սպորեոս պիպի փորձենք դիպարելի առակի զարգացումն իր հիմնական գծերի մեջ՝ համադրելով այն իր միտ երկու կարևոր փարբերակների՝ յունարեն և ասորերեն թարգմանությունների բնագրային համակարգերի մեջ: Նամեմարական այս մեթոդը, կարծում ենք, մեզ հնարատրություն կրայ քննելու առակը երբայական բնագրից մինչև հայերեն թարգմանական բնագիր ուղղագծով՝ հաշուի առնելով հնարատր բոլոր «փարաշեղումները» (exkursus)՝ պարամաշկոթային և կրոնական այս զարգացմանն առ ի լրումն: Սակայն նախքան «առակի» զարգացման շրջանները համառոտաբար ուղենշելը հարկ ենք համարում ներկայացնել «առակ»-ի իմաստները գրաբարում:

Ըստ Նոր Նայկագեան Բառարանի (ՆԲՆԸ)⁶, «առակ»-ն իր առաջին իմաստով համապարասխանում է յունարեն παρὰβολή, πρόβλημα, παροιμία բառերին և նշանակում է՝ «առած նմանաբանական, կամ այլաբանական, բան ինչ ի մեջ առնալ ի նշանակելի գայլ ինչ խորհրդատր նմանություն, և պարմություն, առեղծուած կամ առասպել յարմարեալ ի իրար, կամ ի զարթոցանելի զխելիս առ ի քննելի զգաղություն իրաց»:

Երկրորդ իմաստը յունարեն ἀινιγμα (aenigma, obscurus sermo) բառին համարժեք «առեղծանելիք, մթին ասացուած, որպէս հանելուկ» եզրն է: Այս վերջինից շարքից է փարբերում «օրինակ, ձև, յարացոյց, եղանակ, փիլ» իմաստը՝ ὑπόδειγμα, τύπος (exemplum, typus, figura) համարժեքով: Առակի միտ իմաստները նախարինքի և «դարովանքի» նշանակութեամբ երրորդ կարևոր իմաստային խումբն են կազմում: Այս վերջինից է առաջացել նաև «առականք-անդամք ամօթոյ, ամօթոյք (Ել. Ի 26, Ղևար. ԺԸ 6, 19, Ի 11, 17, 21)» արքայապարտիներ՝ իր բայական կիրառութեամբ՝ «առակեմ»-«խայրառակել, մերկանալ զամօթայիս»:

Առակի իմաստը բանալի է սուրբգրային որոշ դրուագներ (յարկապէս այն մասերի, որոնց գրական կառուցուածքի մեջ առակը վճռորոշ դեր ունի) ճիշտ հասկանալու համար: Մասնագետների կողմից համամասնաբար ընդունուած է առակի երկու հիմնական նշանակություն Աստուածաշնչում (Նին Կրակարանի երբայական բնագիր՝ Texte Massorétique)՝ «նման լինել» և «կառավարել»⁷: Նկարի ունենալով յօդուածի վերնագիրն ու նպարակը՝ այսպէս կանդրադառնանք միայն առաջին իմաստին, բանի որ առակը գրաբար թարգմանութեան մեջ գրեթէ չի գործածուել երկրորդ իմաստով⁸:

Առակի առաջին իմաստը ծագում է հին նախասեմական *m/l* արմարից, որից էլ առաջացել են նոյնիմաստ գրեթէ բոլոր արքայապարտիներն ու բառերը հին սեմական լեզուաբանիքին պարկանող լեզուներում: Գրական սեռերի առարտությունն իր հերթին

6 «Նոր Բառգիրք Նայկագեան Լեզուի», Ս. Ղազար, Վենեթիկ, 1857, րեն «առակ» բառայօդուածը:

7 Տե՛ս «Theological Dictionary», vol. IX, p. 65:

8 Յոր ԻԵ 2-ում «Իսկ արդ առակ (παροιμία) ինչ իցէ ան առ ի նմանե» արքայապարտիներ բառական որոշակիօրէն արքայապարտ է «mašal-առակ»-ի երկրորդ՝ «կառավարելու» իմաստը: Ճիշտ է, սոյն հարցադրումը չենք կարող հէնց «կառավարել» բայով թարգմանել, սակայն «ան» հոմանիշը մեզ հուշում է «իշխանութիւն» բառի ներկայութեան մասին «առակ»-ի երկանհենքում: Տե՛ս նաև երբայական և ասորական բնագրերը, որպէս այն արքայապարտ է իշխանութեան իմաստներով (mašal և šultana):

առիթ է դարձել *mit*-ի բազմիմաստ ու բազմաբովանդակ ընկալմանը թե՛ սուրբգրային և թե՛ հին մերձատարբունեան միջավայրերում: Ստորև կը փորձենք դասակարգել առակի նշանակություններն ըստ սեռային և բնագրային կիրառությունների՝ իբրև ելակետ ընդունելով, անշուշտ, համարեքստն ու փուեալ դրուագի լեզուաբանական առանձնայարկությունը⁹:

Ա. Նախնական ծագում ունեցող առակներ.

Տեսական (*hypothétique*) իմաստով ընդունուած առաջին խմբի այս անուանումը գալիս է այն ընկալմանից առակներին քրուած «նախնական նշանակութեան կամ իմաստի» (*gleich sein*) սահմանումից¹⁰: Այս խմբի առանձնայարկությունները լատգոյնս արքայայտող իստուն օրինակներ են Ծննդ. Ժ 9, Ա Թագ. Ժ 11, ԺԹ 24, ԻԴ 14, Գ Թագ. Ի 11, Եզեկիել ԺԲ 22, ԺԶ 44, ԺԸ 2 հարուածները: Ննարատը է նաև, որ այս խմբի առակներն ամենահինն են սուրբգրային միս առակների մէջ: Յամենայն դէպս, այս առակների մէջ առկայ ժողովրդական-ազգագրական ոգին սրիպում է մեզ՝ վերոյիշեալ ենթադրությունը ճշմարտութեանն աւելի մօտ ընդունել¹¹:

Բ. Երգիծական (*satirique*) պոեմներ.

Այս անուան քակ չորս դրուագ կարելի է ընդունել՝ Եսայի ԺԴ 4-21, Միքիայ Բ 4, Ամբակում Բ 6 շրն., Թուոց ԻԱ 27-30, որոնք, մնացած հարուածների շարքին, առաւել ակնառու կերպով են դրսևորում երգիծական պոեմի իրայարկությունները՝ անէծքներ և օրհնութիւններ՝ հասցեագրուած Իսրայելին կամ նրան հարեան այլ ժողովուրդների: Նմանարիպ հարուածներ են պարունակում երկօրինական խմբագրութեան (*deuteronomiste*) որոշ գրքեր՝ Երկր. Օր. ԻԸ 36-37, Գ Թագ. Թ 7, Բ Մնաց. Է 20, Յոբի գիրքը (ԻԷ-ԼԱ), Սաղմոսները (ԿԹ 44) և այլն:

Գ. Մարգարէական պոեմներ՝ «առածք մարգարէական».

Սրանք հիմնականում շարքի են քարբերում Բ խմբի առակներից. երգիծանքն ու հեղնանքն այս դրուագների անբաժան մասն են: Բայց հարկ է նշել, որ անէծք կամ չար գոշակութիւն յիշեցնող այս մարգարէությունները, քեղի քալով մնախական փրկարանութեան ոգուն, աւարտում են արգասատրութեան և ծաղկումի խոսքումներով: Այս առումով ամենախոսուն օրինակը Բաղասան մարգարէի պարագան է (Թուոց ԻԳ-ԻԴ): Նեզնանքն ու բանաստեղծական ոճն այս գրուածքը դարձնում են մի իսկական առակ՝ անսպասելի և անկանխարեւելի վերջարանով: Իր գրական-լեզուական կառուցուածքով այն կարող է, թերևս, գրաղեցնել պարուատր քեղերից մէկը հինարեւելեան ամենահին առակների շարքում¹²:

9 Առակների թեմարիկ դասակարգման համար քե՛ն **H.-J. Hermisson**, *Studien zur israelitischen Spruchweisheit*, WMANT 28 (1968), էջ 64-92:

10 *EiBfeldt*-ն այս խմբի առակներին քալիս է նաև ժողովրդական-ազգագրական նշանակութիւն, որքեղից և նրանց՝ հին ազգագրական առասպելներին պարկանելու քեմութիւնը (քե՛ն անդ, էջ 11):

11 Տե՛ն **McKane William**, *Proverbs, A New Approach*, London 1970, էջ 24-33:

12 Տե՛ն **Landes George**, նշ. աշխ., էջ 142:

Դ. Խրատական-իմաստասիրական պոեմներ.

Ինչպես արդեն ակնյայտօրէն նշում է անուանումը, այս խմբի առակները վերաբերում են հիմնականում Աստուածաշնչի իմաստասիրական գրականութեանը: Վերջինս մեծապէս ազդում է առակի գրական ձևից ու իմաստից և Սուրբ Գրքում հանդէս է գալիս իբրև առակի իմաստասիրական բազմազանութեան հիմնական կրող¹³: Իսրայէլի իմաստասիրական գրական ոճն էականօրէն փոքրերում է մարգարէների գրութեանը՝ առկայ գագացական աստիճաններից: Իմաստասիրական այս գրութեանը ակնյայտ շուրջ ծառայում են իբրև ուղեցոյց՝ մարդկանց համոզելու և Աստուծոյ հաճելի ճանապարհի վրայ պահելու նպատակով: Այս առումով իմաստասիրական խմբի առակներն ակնյայտ փոքրամասնական և վերածական բովանդակութիւն ունեն, բան մարգարէականները¹⁴: Այս խմբի գրութեանը «առակ»-ը (*mašal*) հոմանիշաբար կամ երբեմն նոյնիսկ համադրաբար գործածում է միւս երկու կարևոր հասկացութիւնների հետ՝ *hiddāh* (փնտի) և *melicāh* (դարձում)¹⁵: Առակ. Ա 6-ից բացի, որը նաև ներածութեան դերակատարութիւն ունի Առակաց գրքի համար, Սղմ. ԽԹ (ԽԸ) և ՆԸ (ՆԹ) լատգոյնս արտացոլում են խրատական-իմաստասիրական պոեմների խրատասիրականութիւնները: Անհատի ճակատագրի մասին խորհրդածութիւնները (Սղմ. ԽԹ (ԽԸ)) և Իսրայէլի հանդէպ ցուցաբերած Աստուծային նախախնամութեան յիշատակումը (Սղմ. ՆԸ (ՆԹ)) վկայում են հեղինակների սրտագոյնութեան մասին՝ մարդուն Տիրոջ ճանապարհի մէջ դնել և ուսուցանել՝ Երա օրէնքները:

Ե. Այլաբանական առակներ (*fables*).

Այլաբանական առակների սուրբգրային օրինակներից (Դ-ար. Թ 8-15, Դ Թ-ագ. ԺԴ 9, Բ Թ-ագ. ԺԲ 1-4) առակն աչքի ընկնող հարմարութեան է պարունակում Եզեկիէլի մարգարէութիւնը (Եզեկ. ԺԷ 3-10, ԻԱ 1-4, ԻԴ 3-5)¹⁶: Բոլոր այս մարգարէական պատմութեանը՝ ներկայացում կենդանու կամ բոյսի օրինակով, Եզեկիէլը փորձում է մեկնաբանել և ընթերցողին հաստ դարձնել Երուսաղէմի անկման պատմական իրականութիւնը: Ընդհանուր առմամբ վերոնշեալ մարգարէական դրուագներին խիստ բնորոշ է այլաբանական ոգին՝ արտայայտում առակների և պատկերների միջոցով: Նորկարակարանեան առակների ըմբռնման մէջ մեծաւ մասամբ արտայայտում է այս այլաբանական կառուցումները՝ իբրև «առակ»-ի զարգացման համեմատաբար ակնյայտ ուղի ուղի շրջանի մի արտայայտութիւն: Յերազային արդէն «առակ-*mašal*»-ն առաջնութիւնը զիջում է յունական *παροιμία*-ին հոմանիշ և արամեական ծագում ունեցող *mašal*-ին, որը Յիսուսի ժամանակուայ Պաղեստինում փոքրած-

13 Տե՛ս **Pirot J.**, նշ. աշխ., էջ 575:

14 Տե՛ս ակն., էջ 576:

15 Առ. Ա 6-ում այս երեք հասկացութիւնները միասին են հանդէս գալիս՝ ներկայացնելով անձնատրուած Իմաստասիրական յարկանիշները (փնտ **Cheyne T. K.**, *Job and Solomon or Wisdom of the Old Testament*, New York 1889, էջ 125, **Rinaldi G.**, «Alcuni termini ebraici relativi alla letteratura», *Biblica* 40 (1959), էջ 274, 277):

16 *mašal*-ի արմատով գործածութեամբ Աստուածաշնչի մէջ հանդիպող 48 դրուագներից 1/3-ն առկայ է Եզեկիէլի գրքում, հմմտ. **Polk Timothy**, «Paradigms, Parables, and Mešalim: On Reading the Mešalim», *Catholic Biblical Quarterly* 45 (1983), էջ 565:

լիս՝ ամենագլխաւորը: Անվանք գրքերի շարքում բաւական կարեւոր տեղ գրադեցնող Ենոքի գիրքը (Ա Պ. վերջ -Բ. ա.-Ա Պ. սկիզբ -Բ. հ.) դրա ամենավաղ ապացոյցն է¹⁷:

«Առակ-mašal»-ն անցնող դարերի ընթացքին հելլենիստական դարաշրջանին խիստ բնորոշ մշակութային և թարգմանական առնչակցութիւնների արդիւնքում իբրև գրական ժանր և միառոտ յայտնուեց Նին Կրակարանի յունարէն (Եօթանասնից, այսուհետ՝ LXX) և աւարերէն (Պէշիթթայ, այսուհետ՝ P) թարգմանութիւններում: Նելլենիստական մշակոյթն օգտագործեց առակի գրական կառուցուածքը՝ սրելով նրա համար անկի զարգացած խրատախմբաւորական պատմութիւնը, քան ինչ երբայեցեղէնի առակախօս պատմութիւնները¹⁸: Սիրաքի իմաստութեան գիրքն իր 51 գլուխներով¹⁹ երբայական և հելլենիստական մշակոյթների խաչաձևման լուսագոյն յուշարձանն է²⁰: Կասկածից վեր է, որ երբայական Աստուածաշունչը կարող էր որևէ ձևով դուրս մնալ մշակութային շրջապատի տեսք սրացած այս զարգացումից:

Նին Կրակարանի յունարէն թարգմանութիւնը կամ LXX-ն «առակի» թարգմանութեան բաւական հարուստ պարկեր է ներկայացնում՝ հաշուի առնելով, անշուշտ, համարեքսիւն և պատմիկ պրատիկական ընթացքին համապատասխան օգտագործուած «mašal-առակ»-ի հոմանիշները: Բացի սեմական ազդեցութեամբ յունարէնի մէջ ներմուծուած նշանաւոր παροβολή-ն²¹, LXX-ի մէջ ունենք «առակ-mašal»-ի թարգմանական հոմանիշների հերթաւոր համայնապարկերը՝ αἰνιγματιστής (Թ-ոց ԻՎ 27 երբայեցեղէնում՝ Ը՛ ԴՊԶ), ἄφανισμός (Գ Թ-ագ. Թ 7), θρήνος (Ես. ԺԴ 4), παροίμαι (Ան . Ա 1), παίδεία (Ան. ԻԵ 1), δουλεία (Ան. ԻԶ 9), ἴσος (Յոր ԺԳ-12-՝ ԴՊԶ), θύλημα (Յոր ԺԷ 6), προοίμιον (Յոր ԻԷ 1, ԻԹ 1), ἔπος (Սիր. ԽԴ 5): Թ-ուարկուած եզրերը փորձենք դիտարկել իբրև հոմանիշային առանձին խմբեր:

αἰνιγματιστής օգտագործուած է Թ-ոց ԻՎ 27-ում՝ Ը՛ ԴՊԶ «առակք»-ը թարգմանելու համար: Նշուած թարգմանութիւնը միակ դէպքն է LXX-ի մէջ, երբ αἰνιγματιστής-ը թարգ-

17 Տե՛ս Suter D. W., «Mašal in the Similitudes of Enoch », *Journal of Biblical Literature* 100 (1981), էջ 193-212:
18 Տե՛ս Pirot J., նշ. աշխ., էջ 579:
19 Սիրաքի իմաստութեան հայերէն թարգմանութիւնը ձեռագրական համեմատութեամբ լոյս է ընծայել Ն. Արսէն Բագրատունին՝ 1866 թ. Աստուածաշնչի իր հրատարակութեան մէջ: Սիրաքեան հօր նկարագրումն այսօր էլ թերեւս արդիական է հնչում. «Օրինակք կրկին թարգմանութեան Գրոցս (իմա՛ Սիրաքի իմաստութեան)՝ անթերիք ի գրագիրս մեր՝ չունին գրութիւն յոյն բնագրին, բազում ուրեք նուագեալ, մասնաւոր ի վերջ կոչս: Որպէս ինչ գրարս գաւ, ըստ հնագոյն թարգմանութեան նախնեաց, ի լոյս ընծայեմք և ի կարգի աստուածաշունչ Գրոցս, մինչև ժամանակն յայրենացէ թերեւս գրագոյնն, և բաց յողղկոցս գայլ եւս խանգարմուս ի յայր բերիցէ» (էջ 681): Սիրաքեան նովիտայի ցանկութիւնը մասնակիօրէն կարելի է իրականացած համարել շնորհիւ Գ. Արզաբեանի՝ «Սիրաքի գրքի հնագոյն թարգմանութեան նորայայտ հարուածներ» արժեքատու յօդուածի («Էջմիածին», 1966 ժԱ-ԺԲ, էջ 59-70): Նովիտայի սրբագրութիւններ և հատկումներ է կատարել Սիրաքի իմաստութեան Բ-Ե, Ժ, ԺԵ-ԺԹ, ԻԱ, ԻԶ, ԻԹ, Խ և ԽԱ գլուխներում, ինչպէս նաև հրատարակել է Բագրատունու փառագրութեան մէջ (ընդամենը՝ ԽԲ գլուխ) պակասող ԽԳ-ԽԶ գլուխները (տե՛ս էջ 65-69): Սիրաքի գրքի հին թարգմանութեան մասին տե՛ս նաև Ե. Կոլո. Դ-ուրեան, Նորագիտ գլուխներ Սիրաքայ գրքի հին թարգմանութենէն, «Սրտ», Երուսաղէմ 1927:
20 Տե՛ս Skehan W. Patrick, Di Lella A. Alexander, *The Wisdom of Ben Sira, A New Translation with Notes, Introduction and Commentary*, Anchor Bible 39, 1987, էջ 40-46:
21 Տե՛ս Eißfeldt O., նշ. աշխ., էջ 22:

մանությունը արքայադուր է, «առակ-mašal»-ի իմաստը: Ընդ որում, *ἀνιγμια*–ն կիրառուած է հիմնականում ԽԴԴ–փեսի, գուշակութիւն եզրի թարգմանութեան մէջ (օր.՝ Թոնոց ԺԲ 8, Գ. Թագ Ժ 1, Բ Մնաց. Թ 1, Առ. Ա 6, Իմ. Սող. Ը 8, Սիր. ԼԹ 3, ԽԵ 15, Դան. Ը 23)²²: Թոնոց ԻԱ 27-ում *ἀνιγμια*–ն պարկերում է ժողովրդական բանաստեղծներին կամ գուսաններին, ովքեր սովորութիւն ունէին ժողովրդական վրանաց կամ քաղաքապետաց երգերն արքայասաներու²³:

ἀφαισιμός, *θρήνος*, *παιδεία*, *δουλεία*, *ἴσος*, *θρόλημα*, *ἔπος*. *mašal*-ի այլընտրանքային թարգմանութիւններ, որոնք մասնագէտներին կողմից սահմանուել են որպէս *mašal*-ի գործածական թարգմանութիւններ²⁴: *παροβολή* եզրին գուշակեմ՝ *παροιμία*-ն կարեւոր կիրառութիւն ունի LXX-ում՝ անմիջականօրէն աղերսուելով իմաստասիրական պարուններին՝ Առ. Ա 1, ԻԵ 1, Սիր. Չ 35, Ը 8, ԺԸ 29, ԼԹ 3, ԽԵ 17: Նկլէնիսական ժամանակաշրջանի գրուածքներում նրա ներկայութիւնը խօսում է բառական հին ծագման մասին: Անլիին, ըստ Eibfeldt-ի *παροιμία*-ն օգտագործուել է նոյնիսկ անարիկ շրջանի գրուածքներում²⁵: *προοίμιον*-ը, իբրև «առակ-mašal»-ի թարգմանութիւն, ներկայ է Յորի գրքի երեք պարուններում՝ ԻԵ 2, ԻԵ 1 եւ ԻԹ 1: Առաջին դրուագում բառն արքայադուր է «*mašal*»-ի երկրորդ իմաստը, այսինքն՝ «կառավարել», «իշխել»: Մնացած երկու պարուններում *προοίμιον*-ը դրուագի սկզբնամասում ներկայանում է իբրև օրհնաբանական պոեմի նախաշարի կամ նախաբան՝ վերագրելով անարիկ շրջանի յունարէնում ունեցած իր շարահիսական առանձնաչարկութիւնները²⁶:

Արդէն նշուեց, որ արամեական ܡܫܐ բառարմատը որոշակի ժամանակաշրջանում դարձաւ յունական *παροβολή*-ի հոմանիշը: Արամեական նոյն բառարմատն առկայ է նաեւ P-ում, որպէս թէ՛ եբրայական եւ թէ՛ յունական բառարմատները թարգմանուել են ܡܬܐ *matla*-ով²⁷: Ատրերէն թարգմանութիւնն այն օգտագործում է հասարակապէս բայական եւ գոյականական ձեւերով: Այս երկու քերականական ձեւերն օգտագործուած են Եզեկիէլի մարգարէութեան ատրերէն թարգմանութեան մէջ՝ ԺԲ 22-23, ԺԳ 44, ԺԷ 2, ԺԸ 3: *matla*-ն իր գոյականական ձեւով մարմաննում է միաժամանակ առակները կամ մարգարէութիւնները եւ բանաստեղծներին²⁸: P-ն, առակի այլաբանական-մարգարէական իմաստը վերհանելու նպատակով, *matla*-ին գուշակեմ գործածում է երկու այլ հոմանիշ հասկացութիւններ՝ ܐܘܬܐܪܐ *ouhadtā*²⁹ եւ ܐܘܠܐ *pēlātā* (Գ. Թագ. Ժ 1, Բ Մնաց. Թ 1, Սղմ. ԽԸ (ԽԹ) 5, ՆԷ

22 ԽԴԴ-ի իմաստը սերտօրէն առնչում է մէկ ուրիշ յունարէն եզրի՝ *πρόβλημα*-ի հետ (Սղմ. ԽԸ (ԽԹ) 5; ՆԷ (ՆԸ) 2; Ամբ. Բ 6):

23 Տե՛ն Landes G., նշ. աշխ., էջ 140:

24 Տե՛ն Eibfeldt O., նշ. աշխ., էջ 22-23:

25 Տե՛ն Eibfeldt O., նշ. աշխ., էջ 23: Արդէն Պլուտարքոսի մօտ *παροιμία* բայի ներկայութիւնը վկայում է գերմանացի գիւրմանի փետրեան ճշմարտացիութեան մասին. հմմտ. G. Bailly, *Abrégé du Dictionnaire Grec-Français*, էջ 669:

26 Տե՛ն "Liddel and Scott's Greek-English Lexicon", New-York 1887, էջ 682:

27 *mašal*-ի երկրորդ իմաստը P-ն արքայադուր է ܐܘܠܐ *šultānā* բառով. փնտ. օր. Յոր ԻԵ 2:

28 Տե՛ն Smith Payne, *Thesaurus Syriacus*, հր. Բ, էջ 2249-2250:

29 Նարկ է նշել, որ Սողոմոն արքայի եւ Սաբբայի թագուհու անվանք «հարց-պարասխանի»-ի մէջ վերոնշեալ եզրը կարեւոր դերակատարութիւն ունի բառերի եւ հանելուկների թարգմանած իմաստները բացատրելու առումով. հմմտ. Brock S., «The Queen of Sheba's Questions to Solomon. A Syriac Version» *Museon* 92 (1979), էջ 331-345: Ատրերէն Նոր Կրակարանը գործածում է *ouhadtā*-ն եւ *pēlātā*-ն Գաղապարցիս թղթի նշանաւոր *ἀλληγορούμενα*-ն (Դ 24) եւ Եբրայեցիս թղթի այլաբանական առանցքը հանդիսացող *τύπος*-ը (Ը 5) թարգմանելու դիպատրութեամբ:

(ՆԸ) 2, Առ. Ա 6, Ամբ. Բ 6³⁰, Դան. Ը 23): Աստածից ակնյայտ է դառնում P-ի թարգմանական բառական աղբարիկ բառապաշարը LXX-ի համեմատությամբ՝ «mašal-առակ»-ի թարգմանությանն առ ի զուգադրություն: Միս կողմից ճիշտ է, սակայն, որ P-ի համար «mašal-առակ»-ն անձանօթ հասկացությունն չէ՝ հաշուի առնելով արամեա-քաղղեական *mētāl*-ի ընդհանուր առնչակցությունն ասորական *matla*-ի հետ: Ըստ այսմ, երկու բառերն էլ ծագում են նույն սեմական բառարմարից, ինչն ասելի հեշտացնում է «mašal-առակ»-ի ընկալումն ու վերարտադրումը P-ի թարգմանական համակարգում: Այս իմաստով P-ն «mašal-առակ»-ի ասորերեն թարգմանությունը (իմա՝ *mtl* բառարմարը) գործածում է իբրև ընդհանրացնող գործառնյալ՝ թարգմանական աշխարհի մեջ զգալիօրեն դիրացնելով բոլոր այն լեզուաբանական ու իմբագրական դժուարությունները, որոնց շար յաճախ հանդիպում են LXX-ի բնագրի մասնագետներն ու մեկնաբանները:

Աստածաշնչի հայերեն թարգմանությունը նմանության բառական եզրեր ունի P-ի հետ՝ թարգմանական ընդհանրացնող գործառնյալ արտերևոյթի (*phénomène*) վերարտադրությամբ: Չնայած հայերեն թարգմանությունը մեծապես ազդու է LXX-ի թարգմանական եղանակներից, սակայն այս պարագային «mašal-առակ»-ը, հայերեն թարգմանության մեջ հանդես գալով իբրև ընդհանրացնող գործառնյալ (*facteur généralisant*), ասելի է ընդլայնում ընդհանրությունների սահմանը: Նայերեն թարգմանության մեջ *mašal*-ին փոխարինած «առակ»-ն³¹ ընդհանուր յայտարարի է բերում բոլոր հնարատր հոմանիշները: «Առակ»-ի բայական ձևը՝ «առակել», հակառակ LXX-ի և P-ի, հայերեն թարգմանության մեջ ունի բառական լայն կիրառություն: Թոնոց ԻԵ 4, (LXX-ում՝ *παράδειγματίσων*), Եզեկ. ԻԳ 18 (LXX-ում՝ *ἐξέχεαν*) և Մարթ. Ա 19 (*δειγματίσαι*) սուրբգրային պատմությունում «առակել» բայն արքայայտում է ծաղր և հեզմանը: Առ. Բ 2-ում «առակել»-ը թարգմանում է յունարեն *παράβαλεῖς*-ը, մինչդեռ Եզեկ. ԻԳ 3-ում նույն հայերեն բայը թարգմանել է յունարենի *εἰπὸν*-ը: «Առակ»-ը երբեմն հանդես է գալիս բայական և գոյականական ձևերով, ինչպես օրինակ Ամբ. Բ 6 և Մրկ. Գ 30 հատվածներում: Առաջինում հայերենը թարգմանել է հեպրեական կերպ. «... գայս ամենայն առակ զմանե՛տ առակեցնե՛ն»: LXX-ն գոյականական ձևի համար ունի *παράβολῆ* եզրը, իսկ բայականի համար՝ *λαμβάνω*-ի ապ. երրորդ դեմք հզն. բայածեղ՝ *λήμψοντα*: Երկրորդի մեջ *παράβολῆ*-ն *τίθημι* բայի դերբայական ձևի (*θῶμεν*) հետ է ներկայանում, որը հայերենը թարգմանում է «առակել» բայով. «որով առակա առակեցուք զնա»: Անշուշտ, միշտ չէ, որ առակը³², իբրև թերականական և սեռային

30 Այս վերջինը բառական հեղափոխությունների մարգարտական ծիսակարգ է ներկայացնում. իրար հաջորդող երեք երբայական եզրերը՝ *mašal* -«առակ», *mēlišah* -«բազմիմաստ բառ», *hidot lō* -«դեպի ի վերայ նորա», LXX-ի մեջ ենթարկուել են թարգմանի իմբագրական միջամտությանը: LXX-ն թարգմանել է «առակ»-ը *parabolé*-ով և իմբատրել միս երկու եզրերը՝ *πρόβλημα εἰς διήγησιν αὐτοῦ*, հմմտ. *La Bible d'Alexandrie LXX*, 23.4-9. *Les Douze Prophètes* ; Joël, Abdîou, Jonas, Naoum, Ambakoum, Sophonie, թարգմանությունը Եօթնասանից բնագրից, առաջարկել է ճանօթագրությունները՝ Marguerite Harl, Cécile Dogniez et alii. Paris (Cerf) 1999, էջ 278: P-ն կարծես նույն թարգմանական եղանակն է որդեգրում՝ *mašal*-, առակ ե-ին իբրև համարժեք դնելով *matla*-ն՝ հոգնակիով, իսկ միս երկու հոմանիշներն արքայայտելով *ouhadta*-ով և *pēlata*-ով (երկուսն էլ՝ հոգնակիով):

31 «Նայոց լեզուի արմատական բառարանի» համաձայն (հր. Ա, Երեան 1971), «առակ»-ն ունի հնդեռոպական ծագում՝ *okī* բառարմարից, որն իր հերթին, անշուշտ, որոշակի լեզուական փոփոխություններով, անցել է հայերենին: Ըստ այսմ, «առակ»-ն ունի վեց իմաստ. ա. օրինակ՝ երբեմն հանդես գալով հենց «օրինակ» բառի հետ. Կեն օր. Գաղ. Գ 24 և Եբր. Ը 5, բ. քննելի խօսք կամ բան, գ. օրինակ երգիծանքի կամ ծաղրանքի, դ. պարմություն կամ առակ՝ բարոյական խրատ պարունակող, ե. հանելուկ, այլաբանական օրինակ, գ. ասոյթ:

32 «Առակ»-ի փարաձուսած հոմանիշներից է «ասած»-ը՝ յունարեն *λήμμα*-ի համարժեքը (*lemma, sumptum, pro-*

ձև, առանց հոմանիշների կամ օժանդակ քերականական բաղադրիչների է հանդես գալիս: Նայերեն թարգմանության մեջ առակը կամ առակի իմաստն արտայայտող բառերը երբեմն փոխարինում են հոմանիշներով: Դ-ան. Ը 23-ում, օրինակ, հայերեն թարգմանությունը յունարեն $\delta\iota\alpha\nu\sigma\sigma\acute{\upsilon}\mu\epsilon\nu\omicron\varsigma$ $\acute{\alpha}\nu\acute{\iota}\gamma\mu\alpha\tau\alpha$ գոյականակերպ դերբայով արտայայտությունը թարգմանել է իմաստը մասնակիորեն արտայայտող «յառակա խորհրդական» բառերով:

Աստածից կարելի է եզրակացնել, որ հայերեն և ասորերեն թարգմանությունները, թեև մեծապես ազդուած LXX-ից, «առակ»-ը թարգմանել են մի փոքր այլ կերպ, քան այն առակայ է LXX-ում: Նախ և առաջ, հիմնական փոփոխությունն *ընդհանրացնող գործառնոթ* արտերևոյթի կիրառությունն է, այսինքն՝ երկու թարգմանություններն էլ, փորձելով համարժեքորեն արտայայտել LXX-ում առակայ «mašal-առակ»-ի հոմանիշները, վերջինս օգտագործել են իբրև լեզուական միջոց՝ հնարատրին չափ նուագեցնելով հոմանիշային առարկությունը քերականական ձևերի կիրառությամբ: Երկրորդ, եթե P-ն «mašal-առակ»-ի մարգարեական և այլաբանական պատմություններն արտայայտելու համար իր փորձադրության փակ ունի երկու եզր ևս (*ouhādā* և *pēlātā*), ապա հայերենն օգտագործում է միայն «առակ»-ը՝ ի բաց առեալ մնացած հոմանիշները, որոնք անուղղակիորեն են առնչվում «mašal-առակ»-ի կիրառություններին³³:

Նույն, կարող ենք նշել, որ Աստածաշնչի հայերեն թարգմանությունն իբրև թարգմանական-լեզուական գործոն կիրառում է «առակ» անուան փակ բառիս բոլոր հնարատր հոմանիշների համախմբման մեթոդը՝ յունարեն և ասորերեն թարգմանական բնագրերից դեպի հայերեն անցումն առելի սահուն դարձնելու միտումով: Այս ուղղությամբ կատարուելիք հեղափոխական փոփոխությունները մեծապես կարող են դիտարկել Աստածաշնչի հայերեն թարգմանության բառապաշարի վերհանումը՝ անշուշտ, յունարեն և ասորերեն բնագրերի ազդեցություններն էլ իրենց հերթին օգտագործելով իբրև հիմնական պայման սայն աշխատանքի:

positio, apophtegma): Վերջինս լայն կիրառություն ունի՝ արտայայտելու համար Տիրոջ կողմից մարգարեներին փրկած պարգամներն ու փեսիկները և բաղկացած է «առնում» բայի արմատից ու «-ամ» դերբայակերպ ածանցից, ճիշտ այնպես, ինչպես որ է պարագան յունարեն $\lambda\eta\mu\alpha$ -ի համար՝ իբրև $\lambda\alpha\mu\beta\acute{\alpha}\nu\omega$ բայից սրելծուած բառ: Ընդհանրապես, «առած»-ը $\lambda\eta\mu\alpha$ -ի թարգմանությունն է և պարկերում է Տիրոջ խօսքի ու խորհուրդի անհասանելիությունը, հմմտ. Դ. Թ-ագ. Թ 25, Ամբ Ա 7, Ջաք. Թ 1, ԺԲ 1, Երեմ. ԻԳ 33, 36-38. « Ա. առեալ ի մեջ բան ինչ, որպես առակ, վճիռ, գրոյց հասարակաց իբրև սկիզբն ըստ ինքեան ծանուցեալ, կամ որպես առակ եղեալ սովորական, և ի Սուրբ Գիրս՝ Պարգամ Տառն, սպառնալիք, յայտնութիւն, գոշակութիւն, փեսիկ: Բ. իբր հարուած, խածում, սպի» (ՆԲՆԼ):

33 Ուշաբժան երեւոյթ է «առակ»-ի վերոնշեալ բոլոր իմաստների առկայութիւնը հայ մարեւագիրների գրածքներում. փեն օր.՝ «առակ-օրինակ»-ի իմաստով՝ **Եզնիկ Կողբացի**, Եղծ աղանդոց, Վենեպիկ, 1826, էջ 104, 282, 294, «առակ-խրատական պատմութիւն». **Ագաթանգեղոս**, Պատմութիւն Նայոց, աշխատասիրութեամբ Գ. Տէր-Մկրտչեանի և Սր. Կանայեանցի, Թիֆլիս, 1909, էջ 71, 187, 224, 232, 329, 338, 466. **Ղազար Փարպեցի**, Պատմութիւն Նայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեանի և Ս. Մալխասեանի, Թիֆլիս, 1904, էջ 52, 70. «ձաղր, հեզանք». **Եղիշէ**, Վասն Վարդանայ և Նայոց պատերազմին, Երեան, 1957, էջ 107. «փիպ, այլաբանութիւն». **Ղազար Փարպեցի**, նշ. աշխ., էջ 181. **Փաստոս Բիզանդ**, Նայոց պատմութիւն, հրատ. Ք. Պարկանեան, Ս. Պեպերբուրգ, 1883, էջ 72. «Քրիստոսի գալստեան նշաններ». **Ագաթանգեղոս**, նշ. աշխ., էջ 54, 214: «Առակ»-ի նշում իմաստային և քերականական իրաչափութիւններն իրենց արտացոլումն են գրել նաեւ հայ մարեւագիրների երկերում, որոնց ուսումնասիրութիւնը, սակայն, դուրս է մեր յօդուածի սահմաններից և առանձին քննութեան նիւթ է: